

**Առակագիտության արդիական նշանակությունը
հանրակրթական դպրոցում***

Ավետիսյան Նազելի

Հանգուցային բառեր. աշակերտի արժեհամակարգ, բարոյական դաստիարակություն, այլաբանական իմաստ, բարոյական դիսկուրս, քննադատական միտք, առասպելականացում, խոսքի կենդանություն

Նախաբան

Յուրաքանչյուր ժամանակաշրջանում մշտապես նորոգվելու միտված ստեղծագործական միտքն իր հետ բերում է գնահատման նոր չափանիշներ: Ժամանակն իր օրակարգում այսօր կյանքի է կոչել հայ գրականության վերագնահատման, վերընթերցման, վերարժևորման հարցերը: Ավելին, ժամանակակից աշխարհի, հասարակական զարգացումների համատեքստում որոշակի առումով դիտարկվում են երեխաների և պատանիների կողմից իրականության նկատմամբ հոգևոր, բարոյական և գեղագիտական սկզբունքների փոփոխություններ: Ժամանակակից հանրակրթության համակարգն իր առաքելությունն իրականացնում է ոչ միանշանակ պայմաններում, որոնք առավելապես կապված են կրթական համակարգի դերի, տեղի և գործառույթների փոփոխության հետ: Այս առումով բոլորովին երկրորդական չեն երեխաների սոցիալականացման խնդիրները, հասունության տարիքի նվազումը կամ այնպիսի դրսևորումներ, ինչպիսիք են սոցիալական ցանցերի, տեղեկատվական և զանգվածային լրատվության միջոցների կողմից այսպես կոչված տեսահոլովակային մշակույթի, առասպելականացված կարծրատիպերի քարոզումն ու տարածումը, ինչպես նաև ազգային մշակույթի մակերեսային ընկալումը, մշակութային ձեռքբերումների նկատմամբ թերահավատ մոտեցումը և այլն: Կրթական խնդիրները սերտորեն միահյուսվում են մշակութային արժեքների ձեռքբերման կարևորության հետ: Մշակութային արժեքների տիրապետումը դիտարկվում է որպես ժամանակակից մարդու դաստիարակության և կրթության կարևոր բաղադրիչ: Մշակույթը դարերի հոլովույթում եղել է մեր ազգը պահող ու պահպանող կենսական

* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ-ի «ՀՀԿԳՄՄՆԴՄՄԺ-09» ծածկագրով դրամաշնորհային ծրագրի շրջանակում

ուժը: Այն առավելապես մեր ազգային ինքնությունն է, մեր դիմագիծը, մեզ բնորոշող և ուրիշ ազգերից տարբերակող ամենակարևոր գործոնը, մեր ազգային վարկանիշը:

Արդի կրթական համակարգում ազգային և համաշխարհային մշակութային, մասնավորապես գրական արժեքների սերմանումը, դրանց փոխանցումը աճող սերնդին դիտարկվում են որպես նրանց ձևավորվող արժեհամակարգի կարևոր բաղադրիչ: Երեխաների արժեհամակարգի ձևավորման գործընթացում մշակութային արժեքների ձեռքբերումը վերջիններիս ստեղծագործական բազմազան կարողությունների զարգացման աներկբա երաշխիք է, որն օգնում է նրանց կառուցելու աշխարհի սեփական պատկերը, մշակութային բազմազանության համայնապատկերում կողմնորոշվելու, պահելու և պահպանելու ազգայինը, պատրաստ լինելու մշակութային կառուցողական երկխոսության: Այսօր ունենք հրամայական՝ դաստիարակելու հայ քաղաքացի, քաղաքական առաջնորդ, ինչպես նաև հզորացնելու պետությունը՝ այս գործին ծառայեցնելով կրթական և մշակութային համակարգը:

Մշակույթը, գրականությունը, աշակերտի արժեհամակարգի ձևավորման կարևոր բաղադրիչներ լինելով, ուղղակիորեն կանխորոշում են նրա՝ որպես անհատի ձևավորումն ու զարգացումը: Սակայն ժամանակակից դպրոցը ոչ միշտ է բավարարում աշակերտի կարիքները գեղագիտական ոլորտներում: Խնդիրն առավել ակնհայտ է դառնում երեխաների ստեղծագործական, քննադատական մտքի զարգացման և դրսևորման թիրախային դիտարկման ժամանակ: Մարդու կողմից ստեղծված գրական արժեքներին հաղորդակից լինելը դրական ազդեցություն է թողնում երեխաների ստեղծագործական, գեղագիտական մտքի զարգացման վրա, մոտիվացնում է նրանց վարքագիծը, ապահովում է երեխաների և հասարակության միջև կայուն հարաբերությունները: Շիրակի մարզի թվով 15 սահմանամերձ դպրոցներում անցկացված հարցումների արդյունքում պարզվել և ընդգծվել է գեղագիտական և բարոյագիտական դաստիարակության կարևորությունը՝ առանձնացնելով առավելապես գեղեցիկը նկատելու և գնահատելու կարողությունների զարգացման անհրաժեշտությունը գրականության, մշակույթի, արվեստի արժեքներին առնչակից լինելու միջոցով:

Ըստ էության ուսուցումը պիտի միտված լինի նաև աշակերտների ստեղծագործական, կրթամշակութային կարիքների բավարարմանը և հոգևոր, մշակութային միջավայրի լավարկմանը:

Հողվածի բովանդակությունը

Մեր երկրի համար պատմական այս նոր փուլում, հանրակրթության մարտահրավերների համատեքստում արդիական իմաստավորման անհրաժեշտություն ունի հատկապես առակի՝ որպես առանձին գրական տեսակի դրսևորման ուսուցումը հանրակրթական դպրոցում:

Առակի մեջ գաղտնագրված գաղափարները, բարոյական սկզբունքները, մարդկայինի մասին պատկերացումները ժողովրդի հավաքական կենսափորձով վավերացված մշտնջենական արժեքներ են, որոնք յուրաքայուր դարաշրջանում ընկալվում և իմաստավորվում են նորովի: Բացառություն չէ, իհարկե, մերօրյա իրականությունը: Հանկարծադեպ ու անակնկալ փոփոխություններն առաջացրել են բարոյական սկզբունքների, սոցիալական հարաբերությունների հախուռն արժեզրկում, նոր արժեքների նույնքան հախուռն ներխուժում կեցության տարբեր ոլորտներ: Անցումային շրջանի այս անխուսափելի երևույթներն իրենց ազդեցությունն են թողել աշակերտների հատկապես մտածողության, հոգեբանության, հուզաշխարհի վրա: Ուսուցչի խնդիրը պետք է լինի ժամանակի հետ կապված փոփոխության ձևերի մեջ մշտական արժեքների գոյակերպը նշմարելը, դրա հետ հաղորդակցվելու ուղիների միջոցները, նաև ընթերցող աշակերտներին գտնելը: Չմոռանանք նաև, որ անհատի արժեքների համակարգում մարդու լիակատար ու բովանդակալից կենսակերպը պայմանավորող շատ նախադրյալների շարքում վճռորոշ նշանակություն ունի գեղեցիկի զգացողությունը: Մարդկային մտածողության փոփոխության հետ փոխվում են նաև մարդու ճանաչողության սահմանները՝ եզրագծված ժամանակի և տարածության մեջ: Վերաիմաստավորման են ենթարկվում մարդու պատկերացումները շրջապատող աշխարհի վերաբերյալ: Եվ այդ համատեքստում առավելապես ակնհայտ է ուրվագծվում գեղեցիկի հասկացությունը: Առավել ևս այն պարագայում, որ հասարակական զարգացման, աշխարհաճանաչման ամենատարբեր փուլերում այս հասկացությունը տարբեր մեկնություններ է ունեցել՝ սկսած աստվածային կամքի արտահայտությունից, սուբյեկտիվ էությունից, մինչև «բնության մոտ լինելը կամ բնությունը նմանվելը» [6, 375]:

Դպրոցահասակի մտածողությունն առարկայական է, ամեն ինչ նա ուզում է տեսնել, զգալ սեփական փորձով. լինի դա իրապես, թե երևակայությամբ: Այդ պատճառով էլ գեղեցիկի մասին ուսուցչի զրույցները չպետք է դուրս գան առարկայական ոլորտից, պետք է ուղեկցվեն կյանքից կամ գրականությունից քաղված շոշափելի օրինակներով: Այս դիտան-

կյունից շատ կարևոր է դպրոցում առակագրության ուսուցումը, ուսուցչի կողմից աշակերտներին միջնադարյան դպրոցներում դասավանդվող «Առասպելավարժություն» առարկայի դասավանդման հնարներին ու հնարավորություններին համահունչ: Առակների ուսուցման միջոցով հնարավոր է դառնում խթանել երեխաների և պատանիների գեղագիտական դաստիարակությունը, նպաստել նրանց քննական վերլուծության, ստեղծագործական և քննադատական մտածողության, համապատասխան գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմանը, գեղեցիկը տեսնելու, զգալու և կերտելու ունակությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Վկայություններ կան, որ առակագիտությունը՝ որպես առանձին դասընթաց՝ առասպելավարժություն, ուսուցանվել է հոգևոր դպրոցներում [4, 105]: Ապագա քարոզիչներն ուսումնասիրում էին առակ գրելու և մեկնաբանելու արվեստը: Ինչպես նկատում է գրականագետ Դ. Գասպարյանը, «Այս դասընթացը նպաստել է քարոզիչների ճառերի հռետորական և ճարտասանական հմտությունների զարգացմանը: Բացառված չէ, որ և՛ Գոշի, և՛ Այգեկցու առակների ժողովածուներն ստեղծված լինեն հենց այդ նպատակով» [2, 197]: Առակը, լինելով ժողովրդական բանահյուսության մեջ ձևավորված փոքրածավալ էպիկական ժանր, մասնավորապես կենդանիների մասին հեքիաթի տարատեսակ, սեղմ սյուժեով ու այլաբանական բովանդակությամբ գրական հնագույն տեսակներից մեկը [7, 23], իր բարոյախոսությամբ օրինակ դառնալու և առակն կատարվածը ներկայացնելու ներքին հնարավորություններով յուրատիպ ազդեցություն կարող է ունենալ աշակերտների դաստիարակության վրա: Այլաբանորեն պատկերված, ներկայացված և կերպավորված ճշմարտությունը լսելի, հետաքրքիր և ուսուցողական է եղել բոլոր ժամանակներում: Ընդօրինակումն առավել դյուրին է, քան վերացական խրատն ընդունելը: Եվ այս պարագայում առավելապես առաջնություն է ստանում գեղարվեստական ընդհանրացված ժամանակն ու տարածությունը, որը դրսևորվում է առակում՝ ի հակադրումն կոնկրետ ժամանակի: Առակներն ստեղծում են աշխարհըմբռնում՝ ինչ-որ տեղ, ինչ-որ ժամանակ, որի համակարգում առաջնային արժեք են ձեռք բերում արծարծված թեմաների համընդհանրությունը, համամարդկայնությունը, բոլոր ժամանակներին և բոլոր տարածություններին բնորոշ լինելը [3, 174]: Բոլորովին պատահական չէ առակներում գեղարվեստական խոսքի այնպիսի հատկության դրսևորումը, ինչպիսին է խոսքի կենդանությունը: Աշակերտներին հաղորդակից դարձնելով խոսքի այս հատկությունը՝ հատկապես նշվում

է, որ այն ապահովվում է լեզվամիջոցների այնպիսի գործածությամբ, որի շնորհիվ կարևորվում է նկարագրվող հասկացության առարկայորեն կոնկրետ արտահայտումը [5, 118]: Այնուհանդերձ, պետք չէ նաև մոռացության տալ այն կարևոր հանգամանքը, որ Քրիստոսը որպես ժողովրդի հետ հաղորդակցման լեզու ընտրել էր առակը՝ որպես առավելապես ընդունելի, ընկալելի և սիրելի, նախընտրված միջոց: Հայոց այբուբենն ստեղծելուց հետո Մեսրոպ Մաշտոցն ու իր աշակերտներն սկսեցին թարգմանել Աստվածաշունչը, և հենց հայերեն թարգմանված, հայերեն տառերով գրված առաջին նախադասությունը՝ «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ», Մողմունի առակներից էր: Ընդ որում՝ բոլոր ժամանակներում բազում իմաստուններ իրենց խոսքն ու միտքը, քննադատությունը հասարակությանը փոխանցել են այլաբանորեն, առակի միջոցով: Առակների հնագույն օրինակներ դիտարկվում են և՛ հին հնդկական, և՛ հունական, և՛ ընդհանրապես հին ժողովուրդների գրականության մեջ:

Հայ առակագրության արմատները ձգվում են թարգմանություններից, որոնցից էլ ծլարձակել է հայ ինքնուրույն առակագրությունը: Առակն իր դիպուկ և սեղմ շարադրանքով, վիճակի, հարաբերության նկարագրությամբ, ինքնատիպ մեկնաբանությամբ, հետաքրքիր բարոյախոսությամբ ու հնարամիտ լուծումներով արդիական է ժամանակների զուգահեռականներում՝ իրար աղեղելով նաև ուսուցողական իմաստախոսություններ: Առակագիրները, առակներում դրական հատկանիշները դրվատելով և բացասականները ծաղրելով, պատժելով մարդկային այնպիսի որակներ, որպիսիք են ազահությունը, նենգությունը, հիմարությունը, չարախոսությունը, չկամությունը, սոգիտությունը, այս հետաքրքիր, մանրավեպ հիշեցնող գրական տեսակը դիտարկել են իբրև պաշտպանական վահան ընդդեմ ժամանակի հոռի բարքերի: Առակներն իրավիճակային զուգահեռումներին համարժեք բարոյախոսական կառույցով, հետաքրքիր զուգադրություններով, իմաստակիր արտահայտչամիջոցներով ծավալվում և քննումի ընդգրկուն հնարավորություն են տալիս: Ուսուցողական լիցքերի անտեղիտալի գերակայությամբ առակի գրական տեսակն ըստ ամենայնի կարելի է լիարժեք օգտագործել աշակերտների դաստիարակության տիրույթում՝ նպաստելով երեխաների ճիշտ հաղորդակցմանը, ստեղծագործելու կարողությունների զարգացմանը, նրանց հետաքրքրությունների բացահայտմանը և այլն: Առակներում ամեն ինչ չափվում և արժևորվում է բարոյախոսության պահանջներով, ամեն ինչ ճշմարտվում և վերափոխվում է ըստ այդ պահանջների: Առակի դիպաշարային

կառուցվածքի մեջ կյանքի օրինաչափական ճիշտն է, և մի խորաքնին հայացք է պետք այդ ամենը տեսնելու, այդ ամենի ներքին կապերը բացահայտելու և ստուգելու համար:

Առակագիրները ոչ թե սովորական ձևով պատմում են, այլև ներկայացնում, կենդանագրում, մանրամասներով ստեղծում ամբողջի տեսանելի պատկերը: Կատարվում է հիմնականում ծաղրող այլաբանական ասելիքի խտացում, բարոյախոսության առանձնացում և ընդգծում: Առակագիրը կարողանում է բնականորեն վերարտադրել հոգեվիճակն ու զգացողությունը՝ ստեղծելով գեղարվեստական արձակի պատում, մշտապես արդիական խոսքի կշռույթ, ինքնատիպ մտածողություն: Առակներում հերոսների բնավորության և վարքի յուրօրինակ կադապարներում առակագիրների կողմից առաջադրվող աշխարհի բացահայտ պայմանական ձևերը կողմնորոշում են նաև առակի բնույթը: Արտաքին իրադարձային շերտի ներքո նկարագրվող երևույթը պայմանավորում է նյութի խորքային բնութագիրը, ինչի արտացոլումն է նաև բնավորության և կեցության միահյուսումը: Հետագոտելով ժամանակի գոյի տարբեր հայեցակետերը՝ կարելի է որակապես վերաիմաստավորել առասպելավարժության գեղագիտական գլխավոր սկզբունքները՝ նոր բովանդակությամբ լիցքավորելով աշակերտ-հասարակություն-աշխարհ-բնավորություն կապերը: Ի վերջո ըմբռնելով առակի կառուցվածքը՝ աշակերտը կկարողանա ընկալել ենթատեքստը, փոխաբերական, այլաբանական իմաստները, ինչպես նաև առակի լեզաոճական առանձնահատկությունները: Առակագրության և առակագիտության նոր շերտերի բացահայտմամբ առակների կառույցում ներդաշնակորեն տեղադրվել են այնպիսի աննախադեպ դրսևորումներ, ինչպիսիք են խոհական լիցքը, այլաբանական խոսքը, բարոյական ըմբռնումները, որոնք գալիս են ներկայացնելու մարդ անհատին իր բարդ և ոչ միանշանակ էության: Ավանդականի և արդիականի փոխհարաբերություններում առակի կառույցում ժամանակի շունչը զգացող և նուրբ դիտողականությամբ առաջադրված հրատապ գաղափարադրույթներ են արծարծվում: Կյանքի առանձին կողմերի պատկերմանը հարակցվում են հասարակական աղերսներում մարդ անհատի բարոյահոգեբանական կերպարի դրսևորումները՝ ընդգծելով բարոյական ճշմարիտ արժեքները և առանձնացնելով առակի ուսուցման կարևորությունն ու անհրաժեշտությունը ժամանակային հոլովությունում:

Առակի ուսուցումը հանրակրթությունում սերտ աղերս ունի գեղեցիկի արտահայտման, դրա բովանդակային կողմի բացահայտման հետ: Հայտնի է, որ գրականության ուսուցման ընթացքում գեղեցիկի զգացողու-

թյան ու Ճաշակի ձևավորման համար հատուկ դասաժամեր չեն հատկացվում. այդ նպատակն անբաժան է դասավանդման ամենօրյա գործընթացից: Գեղեցիկի «գաղտնիքը» բովանդակության հետ համատեղված ձևի օրինաչափությունների միահյուսումն է, որը չի կարող նատուրալիզմ կամ, ասենք, ֆորմալիզմ լինել: Այս առումով գրականությունը ապագա անհատի և քաղաքացու արժեքային համակարգը ամբողջացնելու, առավելապես գեղագիտական դաստիարակության անսահման հնարավորություններ է տալիս: Այդ նպատակին ծառայում են նաև առակները, որոնց ուսուցումը և դրանց ուսուցմամբ գրական ունակությունների զարգացումը լավ հիմք, հենման հարթակ կարող են դառնալ ուսուցչի համար հանրակրթական դպրոցում դաստիարակչական բեղմնական աշխատանք իրականացնելիս: Նշենք, որ աշակերտների մեջ համամարդկային հատկանիշները մշակելու և զարգացնելու գործընթացները չպետք է կապված լինեն միայն գեղարվեստական բնագրերի ուսումնասիրության հետ: Այդ գործընթացները տևական և բազմաբնույթ աշխատանք են պահանջում: Այդ աշխատանքի կարևոր օղակներից մեկն էլ ստեղծագործական ինքնուրույն փորձերի խրախուսումն է, մասնավորապես իր իսկ կողմից ստեղծագործված առակի միջոցով արտահայտել սեփական դիտարկումներն ու մտորումներն աշխարհի մասին, ինչպես նաև հանդես գալ այլաբանական հակիրճ խոսքով, գատել միմյանցից իրականն ու այլաբանականը՝ տարբերակելով գլխավորը երկրորդականից: Նման դիտանկյունից ենք քննում մասնավորապես առասպելավարժության հնարավորությունները, որը ենթադրում է աշակերտներին ոչ միայն քերականություն և ճարտասանություն սովորեցնել, այլև առակներ գրել, սերտել և մեկնել: Վերածնելով առասպելավարժությունը որպես քննական վերլուծության, ստեղծագործական և քննադատական մտածողության զարգացման միջոց՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում աշակերտների մոտ զարգացնել գեղեցիկի զգացումը՝ այն չտարանջատելով դաստիարակչական խնդիրներից:

Գրականությունը, որը միշտ ուղղված է ներկային ու ապագային, երբեք չպետք է կորցնի իր հիշողությունը և պետք է կարողանա ի մի բերել ժամանակները՝ սկիզբն ու ընթացքը, երեկն ու այսօրը, պատմությունն ու արդիականությունը:

Եզրակացություն

Վերադարձը առակագիտության և առակներով ուսուցանելուն խոսում է ժողովրդի և նրա գրականության կենսունակության մասին: Անցյալի ու ներկայի միասնությունը ձևավորում է կարևոր նշանակու-

թյուն ունեցող ժամանակների կապը, որը ժամանակային պարզ հաջորդականությունից վերածվում է նաև դաստիարակչական հնարների ընտրության հեղինակային հայեցակետի: Առակագրությունը հայ արձակի մեջ հաստատապես ներմուծել է անիմանալի, անբացատրելի երակ խորապես ինքնատիպ և ուսուցողական:

Առակներում իրական նկարագրությունը նրբորեն կտրվում-անջատվում է առարկայական կշռից, նյութական ծանրությունից, շարունակվում մտքի և բարոյախոսության ոլորտում և տրվում մտածողության և խոհական թռիչքներին: Առակներն իրենց բարոյախոսությամբ մեզ պարտավորեցնում են սերնդեսերունդ փոխանցել այլաբանորեն ասված դիպուկ խոսքն ու միտքը: Հիշողությունը պայքարի գեներ է և գոյատևման հնարավորություն: Տեսողությունն ու մտքի հայացքը միասնաբար են ընկալում ու վերարտադրում երևույթը, շարժումը, գոյությունը: Առակագրությունը մեզ համար քարտեզագրում է մի ամբողջ աշխարհ, որը դաստիարակչական ինքնատիպ հնարներ ունի: Առակը ծնվել է իրականությունից, հասարակությանը դաստիարակելու մտահոգությունից: Սա է առակի գրական դպրոցը՝ թե՛ որպես գրական դասերի դպրոց, և թե՛ որպես գրական կողմնորոշման դպրոց: Առակների քննումով վերջնարդյունքում ակնկալում ենք ունենալ գրականության նշանակությանը հաղորդակից, ազգամշակութային արժեքները գնահատող, արժևորող, քննադատական մտածողությամբ, զարգացած երևակայությամբ ազատ անհատ:

Գրականություն

1. Աստվածաշունչ մատյան Հին և Նոր Կտակարանների, Հայաստանի աստվածաշնչյան ընկերություն, Էջմիածին, 2017:
2. Գասպարյան Դ., Հայ հին և միջնադարյան գրականություն պատմություն, Երևան, Տիգրան Մեծ, 2009:
3. Գրականության տեսության արդի խնդիրներ, Ուսումնական ձեռնարկ, Երևան, ԵՊՀ հրատ., 2016:
4. Գրիգոր Մագիստրոս, Թղթեր, Ալեքսանդրապոլ, 1910:
5. Մելքոնյան Ս., Հովհաննես Շիրազ (գեղարվեստական վարպետության հարցեր), Երևան, Բարձրագույն դպրոց, 1993:
6. Նալբանդյան Մ., Մ. Նալբանդյանի ֆ., 8-1/(7), ԵԶԳԱԹ, «Լուսա», 1900, գիրք 1:
7. Սանթրյան Ս., Գրականագիտական բառարան, Երևան, «Վան Արյան», 2009:

Современное значение басноведения в общеобразовательной школе

Аветисян Назели

Резюме

Ключевые слова: система ценностей учащегося, нравственное воспитание, аллегорический смысл, нравственный дискурс, критическая мысль, мифологизация, живость речи

Время внесло в повестку дня вопросы перечитывания и переоценивания армянской литературы. На этом новом историческом этапе в современном осмыслении нуждается также преподавание басен в общеобразовательных школах. Представления, закодированные в басне, являются ценностями, подтвержденными коллективным жизненным опытом народа, которые в каждую эпоху воспринимаются и интерпретируются заново. Сегодняшняя действительность не является исключением. Внезапные и удивительные изменения вызвали девальвацию нравственных принципов, общественных отношений, вторжение новых ценностей в разные сферы жизни. Эти неизбежные явления переходного периода должны были оставить свое влияние на мышлении, психологии и эмоциональном мире учащихся. Задачей учителя должно быть выявление постоянных ценностей в закономерных изменениях во времени, средств связи с ними, а также найти читающих учащихся.

Помня о том, что мышление юноши-школьника предметно, и ему хочется все увидеть и ощутить на собственном опыте, беседы педагога о прекрасном не должны выходить за пределы предметной области, а должны сопровождаться наглядными примерами, взятыми из жизни или литературы. С этой точки зрения очень важно преподавание притч в школе, информирование учащихся со стороны учителя о приемах и возможностях преподавания предмета «Мифология» в средневековых школах. Есть свидетельства, что басноведение как отдельный курс «Мифология», преподавалось в духовных школах. Будущие проповедники изучали искусство написания и толкования басен. Этот курс способствовал развитию ораторских навыков и красноречия проповедников.

Басня, являясь одним из древних фольклорно-литературных видов, своей нравственностью способна оказать уникальное влияние на воспитание учащихся. Аллегорическая правда была поучительна во все времена. Басня с ее точным повествованием, описанием ситуации и отношений, нравственными и остроумными решениями актуальна во времен-

ных параллелях. В баснях все измеряется и оценивается требованиями нравственности.

Известно, что при обучении литературе не выделяются специальные часы для формирования чувства прекрасного и вкуса. Эта цель неотделима от ежедневного процесса преподавания. В этом смысле литература предоставляет безграничные возможности для создания целостности системы ценностей будущего человека и гражданина. Этой цели служат и басни, изучение которых, а также развитие литературных способностей посредством их преподавания становятся для учителя основой эффективной воспитательной работы в общеобразовательной школе.

Возвращение к изучению и преподаванию басен говорит о жизненной силе народа и его литературы. Единство прошлого и настоящего образует важную связь времен, которая из простой временной последовательности превращается в авторскую точку зрения на выбор воспитательных приемов.

Modern Meaning of Fable Study in the Public School

Avetisyan Nazeli

Summary

Key words: *student's value system, moral education, allegorical meaning, moral discourse, critical thinking, activities on myths, speech aliveness*

Nowadays the time has brought the issues of re-assessment, re-reading and re-evaluation of Armenian literature. In this new historical phase, the teaching of fable tales in public schools also needs modern meaning. The ideas encoded in the tales are values validated by the people's collective life experience, which are perceived and interpreted in a new way. Today's reality is not an exception. Sudden and surprising changes have caused the depreciation of moral principles, social relations, invasion of new values into different spheres of existence. These inevitable phenomena of the transitional period had to leave their impact especially on the students' way of thinking, psychologic and emotional world. The teacher's duty should be to identify the constant values in the changes over time, means of communication and reading skills.

Remembering that the thinking of school-age youth is subjective, and they want to see and feel everything, the teacher's conversations about beauty should not go beyond the subject area, but should be accompanied by tangible examples taken from life or literature. From this point of view, it is very important to teach moral tales at school, informing students on the part of the

teacher about the methods and possibilities of teaching Mythology" in medieval schools. There is evidence that fables as a separate course – “Mythology” were taught in theology schools. Future preachers studied the art of writing and interpreting parables. This course contributed to the development of preachers’ rhetorical and oratory skills.

The fable, being one of the ancient folklore and literary types, can have a unique effect of morality on the education of students. Allegorical truth has been instructive at all times. The fable tale with its accurate narration, situational description, relationship, moral and ingenious solutions is still relevant. In fable tales, everything is measured and valued by the requirements of the morality.

It is known that when teaching literature, special teaching hours are not allocated for forming the perception of beauty and taste among students: that goal is inseparable from the daily process of teaching. In this sense, literature provides endless opportunities to complete the value system of a future individual and citizen. This goal is also served by fables, the study of which, as well as the development of literal comprehension through teaching, becomes the basis of effective educational work for a teacher.

Fables are now again being studied and taught in schools, which demonstrates the vitality of the people and their literature. The unity of the past and the present creates a crucial temporal connection that transforms a straightforward chronology into the author's perspective on the selection of educational strategies.

Ներկայացվել է 20.09.2022 թ.
Գրախոսվել է 30.09.2022 թ.
Ընդունվել է տպագրության 25.11.2022 թ.